

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԻ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

### Գ. Բ. ԶԱՀՈՒԿՑԱՆ

«Բանրեր Երևանի համալսարանի» հանդեսի 1993 թ. 2-րդ համարում լույս տեսած մեր հոդվածի մեջ փորձ է արված, ի թիվս այլ ստուգաբանությունների, տալու նաև աշան/հաշան բառի ստուգաբանությունը: Մեր օրերում, երբ հնդեվրոպական ծագման բառերի ամենից ավելի ակնհայտ շերտի ստուգաբանությունը հայտնի է, դժվար է գտնել նույնպիսի ակնհայտ ստուգաբանություններ, և հնարավոր է, որ աշան-ի համար առաջարկված ստուգաբանությունը այնքան էլ համոզիչ չլինի: Ա. Մեյերի, Հ. Աճառյանի և Ռոբիշների ստուգաբանական շատ փորձեր նույնպես այնքան էլ համոզիչ չեն: Եվ հարկ չէր լինի գրիչ վերցնել ու պատասխանել հիշյալ բառի առթիվ պրոֆ. Ա. Մարգարյանի դիտողությունը, եթե չլինեին նրա անհանդուրժող տոնը և այդ անհանդուրժող տոնին չհամապատասխանող ստուգաբանության նրա փորձը: Եվ իրոք, ի՞նչն է քննադատում և ի՞նչ է առաջարկում Ա. Մարգարյանը:

1. Ա. Մարգարյանը դժգոհ է աշան գոյականի և աշան անել, աշանել բայերի համար Հ. Աճառյանի տված և մեր կողմից բերված բացատրությունից՝ «կալսելու ցորեն», «ցորենը կալը լցնել կալսելու համար», և դրա փոխարեն ավելի ընդունելի է համարում Ս. Ամատունու բացատրությունը՝ «կալի մեջ խրձերի ցրվածքը» և «խրձերը կալի մեջ սփռել՝ ցրել»: Բայց ինչո՞ւ են խրձերը կալի մեջ ցրում, եթե ոչ կալսելու համար, և այդ բանն ասում է Ա. Մարգարյանի վկայակոչած Ստ. Մալխասյանցը՝ «հաշան. կալսելու՝ ծծելու որա», «հաշան անել. խուրձերը բանալ, կալի մեջ փռել՝ կալսելու համար»: Ինքը Ա. Մարգարյանն էլ իր «Գորիսի բարբառում» (էջ 424) գրում է. «հաշան. կալսելու՝ կալում փռած խրձերը» և «հաշան անել. նր. հաշանել՝ խրձերը փռել կալսելու համար»: Արդ՝ ինչի՞ դեմ է առարկում Ա. Մարգարյանը. չէ՞ որ նույնիսկ Ս. Ամատունու բացատրությամբ էլ (հացահատիկի) խրձերը կալի մեջ են սփռում՝ ցրում, այսինքն՝ ցրում են ոչ թե հենց այնպես, այլ կալսելու համար:

2. Ի՞նչ է դնում մեր ստուգաբանության տեղը Ա. Մարգարյանը. ոչ ավելի, ոչ պակաս, քան (հ)աշան-ի կապը... հաշել «հալումաշ անել, մաշել, հյուծել, տկարանալ» բայի հետ (իբր թե հաշան անելու ժամանակ «հաշում, մաշում, հյուծում, նիհարում է տեղի ունենում»): Սրանից հետո ի՞նչ դրժվարություն կա հաշմ բառն էլ կապել հաշ-ի հետ, և Ա. Մարգարյանը կատարում է նաև այդ քայլը: Ահա թե ինչի՞ համար էր հարկավոր հաշանել-ը կամ հաշան անել-ը հեռացնել կալսելու նպատակից և գլխավորը համարել ցրումը («ամբողջի մասնատումը» ըստ Ա. Մարգարյանի): Էլ չենք ասում, որ հաշել բայի ծագումն անհայտ է, և սրանով մի անհայտը փոխարինվում է մի այլ անհայտով:

3. (Հ)աշան բառը հին մատենագրության մեջ չի հանդիպում, և մենք

չգիտենք՝ առաջնայինը ճ-ով ձևն է, որի մեջ հ-ն ընկել է, թե՞ առանց հ-ի ձևը, որի մեջ հ-ն բարբառային սովորական հավելում է. երկուսն էլ հնարավոր են, թեև Ա. Մարգարյանը պնդում է առաջին վարկածի վրա: Նշենք, որ մեր առաջարկած ստուգաբանության մեջ մենք ելել ենք երկրորդ վարկածից, բայց առաջին վարկածի դեպքում էլ այդ ստուգաբանությունը հնարավոր կլինի:

Կրկնում ենք՝ մեր տված ստուգաբանությունը կարող է ակնհայտ չլինել և կարող է նույնիսկ շհամապատասխանել իրականությանը, բայց որ հաշան-ը կապ չունի հաշել և հաշմ բառերի հետ, այդ ակնհայտ է:

**Г. Б. Джаукян—По поводу одного замечания.**—Автор возражает на точку зрения Ал. Маркаряна, опубликованную в данном номере журнала, и утверждает, что *հաշան* не имеет отношения к словам *հաշել* и *հաշմ*.